Պարույր Սևակ

Արտերն են ծփում

Առավոտն այնտեղ կանուխ է այնքան
Իր աչքը բանում
Եվ այնքա՜ն հանկարծ, որ միտք ես անում,
Բայց չես հասկանում:
Մութը քաշվում է ծմակ ու քերծեր,
Իսկ հետո՝ շոգին
Սարատափի տակ, քար ու թփի տակ
Փոխարկվում շուքի:
Իսկ լո՜ւյսը... Լույսը հեղեղի նման
Վարարո՛ւմ, հորդո՛ւմ,
Սարերն է բռնում, երկինք է հառնում,
Լճանում սրտում:
Իրիկվա քամին զարթնում է հանկարծ
Եվ միանգամից,
Ինչպես բուրավետ իր օրորոցում՝
Երեխան քնից:
Արտերն են ծփում, ալիքվում այնպես
Գժորե՜ն, կարծես
Երբեք չե՛ն զսպվի, երբեք չե՛ն դառնա
Կաշկանդված խրձեր...

15.VIII.1956թ.

Չանախչի